ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 12 "նոյեմբերի 2012թ. № 118-Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 7-ի <<Մրցույթում հաղթող ճանաչվելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Արտյոմ Ասլանի Թադևոսյանին 2012թ. նոյեմբերի 12-ից նշանակել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք. «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի <<Մրցույթում հաղթող ճանաչվելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, Ա. Թադևոսյանի անձնական դիմումը:

2. Ա. Թադևոսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.նոյեմբերի 12
ք. Կապան